

Երկրաբանական և աշխարհագրական գիտություններ

Բնագրերը ներկայացվում են հայերեն, ռուսերեն կամ անգլերեն լեզուներով, երկու օրինակով, համակարգչային շարվածքով «Microsoft Word 2003–2010» ծրագրով (հայերեն տեքստը՝ Times Armenian, ռուսերենը և անգլերենը՝ Times New Roman տառատեսակներով) և եռալեզու ամփոփումներով, որտեղ պետք է շարադրված լինեն աշխատանքի գլխավոր արդյունքները՝ առանց հղումների, 100 բառից ոչ ավելի ծավալով: Երեք ամփոփումներն էլ պետք է իրար համապատասխանեն: Բոլոր երեք լեզուներով հեղինակների ազգանունները և հոդվածի վերնագիրը գրել գլխատառերով: Տեքստը շարել 12 pt-ով, 1,5 ինտերվալով՝ աջ և ձախ կողմերում պահպանելով 2 սմ դաշտ: Վերին ձախ անկյունում գրվում է ՄԸԿ-ն, հաջորդ տողում հեղինակների անվանատառերն ու ազգանունները, այնուհետև հոդվածի վերնագիրը:

Հոդվածի ծավալը աղյուսակներով չպետք է գերազանցի 10 էջը, հաղորդմանը 4 էջը, նամակինը՝ 2:

Հոդվածները ձևակերպվում են հստակ ենթաբաժիններով: Ներածություն կամ Խնդրի դրվածքը, որտեղ պետք է հիմնավորվի տվյալ հետազոտության անհրաժեշտությունն ու հրատապությունը, Հետազոտության մեթոդիկան և Եզրակացություն, որտեղ հստակ ձևակերպվում են ստացված արդյունքները և հետևությունները: Կարող են լինել այլ ենթավերնագրեր՝ պայմանավորված տվյալ աշխատանքի առանձնահատկություններով: Բոլոր բանաձևերը շարել «Equation» ծրագրով:

Հղումները պետք է լինեն քննարկվող խնդրի հետ առնչվող ժամանակակից հրատարակումների վրա: Դրանք բերվում են բնագրի լեզվով ըստ հանդիպման հերթականության, կարգային համարը նշվում է քառակուսի փակագծերում ([1], [2–5]): Հոդվածի վերջում նույն հաջորդականությամբ բերվում է գրականության ցուցակը՝ կարգային համարը, հեղինակների ազգանուններն ու անվանատառերը: Պարբերական հրատարակությունների համար այնուհետև հաջորդում է ամսագրի ընդունված կրճատ անվանումը առանց չակերտների, հրատարակման թվականը, հատորի ու թողարկման համարները, հերթական համարը, էջը, վերնագիրը, գրքերի դեպքում՝ նաև հրատարակման վայրը, հրատարակչությունը, թվականը: Չհրատարակված աշխատանքի վերաբերյալ (բացի դիսերտացիայից) գրականության մեջ նշել չի թույլատրվում:

Միևնույն նյութը աղյուսակի և նկարի ձևով ներկայացնել չի թույլատրվում:

Թույլատրվում է 5-ից ոչ ավելի նկար, որոնք իրենց բացատրություններով պետք է ներկայացնել առանձին File-ով:

Հոդվածը ստորագրվում է բոլոր հեղինակների կողմից:

Խմբագրությունը հեղինակին տալիս է առաջին սրբագրությունը, որտեղ ուղղման ենթակա են տպագրության սխալները:

Խմբագրությունը հեղինակներին անվճար տրամադրում է հանդեսի 1 օրինակ և հոդվածի 5 առանձնատիպ: